545 Տե՛ր, գալիս եմ Քեզ մոտ ես ճամփով քարքարոտ,

1. Տե՛ր, գալիս եմ Քեզ մոտ ես ճամփով քարքարոտ,
Այն ներկված է արդեն սուրբերիդ արյունով,
Տե՛ր, փշոտ է ու նեղ՝ լցված դառնությունով,
Չեմ դիմանում՝ երբ եմ հանգչելու Քո գրկում:

Տե՛ր, խնդրում եմ, լսի՛ր աղերսանքն իմ սրտի,
Չէ՞ որ Դու ես միակ ապավենն իմ կյանքի,
Թող անցնեմ այս ճամփան սուրբ խաչիդ հետքերով,
Եվ պահպանի՛ր Դու ինձ Քո խոցված ձեռքերով:

2. Տե՛ր, ես Քեզ եմ փնտրում այս ճամփին քարքարոտ,
Խոստացել ես, գիտեմ, Դու կանգնած ես շատ մոտ:
Վախենում եմ, իմ Տեր, էլ ոչինչ չեմ տեսնում,
Բայց Քո սերը անմար ինձ առաջ է տանում: